

## 1920 Թ. ԹՈՒՐԲ-ՅԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ

### ԷՊԻՏԱ ԳԶՈՅԱՆ

1920 թ. սեպտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը թուրքական մեծաքանակ ուժերը հարձակվում են Հայաստանի Հանրապետության վրա: Քեմալական բանակն ամեն տեսակետից գերազանցում էր հայկականին, և ռազմական գործողությունները հենց սկզբից ընթացան թուրքական կողմի հաջողություններով<sup>1</sup>: Պատերազմի առաջին իսկ օրերից Հայաստանի կառավարությունը կոչով դիմում է եվրոպական տերություններին՝ օգնություն խնդրելով հայ ժողովրդի գլխին կախված վտանգը վերացնելու համար:

Փարիզում հայկական ազգային պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանը 1920 թ. հոկտեմբերի 6-ին նամակ է ուղարկում Լիգայի խորհրդի նախագահ Պ. Յյունանսին՝ տեղեկացնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունից ստացված տվյալների համաձայն թուրքական կանոնավոր ուժերը շարժվում են դեպի Կարս՝ Հայաստանին պարտադրելու Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը, ինչպես նաև միանալու բոլշևիկներին: Նամակը համառ կոչ և խնդրանք էր Լիգային միջամտել՝ ապահովելու Սևրի պայմանագրի կիրառությունը<sup>2</sup>: Կառավարությունը տեղեկացնում էր նաև, որ հայերը կռվում են միանգամից երեք ճակատով՝ թուրքերի, թաթարների և բոլշևիկների դեմ, ռազմամթերքի, պարենի, վառելիքի լիակատար անբավարարության պայմաններում: Հետաքրքիր է, որ նամակում հայկական կողմը լուջ անդրադարձ էր արել բոլշևիկյան գործողություններին՝ տեղեկացնելով, որ վերջիններս դրական են վերաբերում թուրքական արշավանքին՝ համոզված, որ համաշխարհային իսլամական հեղափոխությունը Արևելքում կհանգեցնի տնտեսական համակարգի անկայունության, ինչի վրա էլ բոլշևիկները խաղաղույթ են կատարում, որպեսզի հասնեն իրենց համակարգի տարածմանը: Փաստորեն, հայկական կողմը շատ ճիշտ էր ըմբռնել Արևմուտքի պայքարը բոլշևիկների դեմ և ցանկանում էր օգտագործել այդ հանգամանքը թուրքերի դեմ պատերազմում որևէ օգնություն ստանալու ակնկալիքով: Ավելին, նամակում շեշտված էր, որ համաշխարհային խաղաղությունը սպառնալիքի տակ կլինի, եթե երիտթուրքերը բոլշևիկների հետ համատեղ գործելու ազատություն ստանան. «Հենց միայն այս պատճառով կարելի է օգնել Հայաստանին»<sup>3</sup>: Հայաստանի Հանրապետության կառավարությունը թեև ճիշտ էր հասկացել իրավիճակը, սակայն գերազնահատել էր բոլշևիկների դեմ կռվելու Արևմուտքի պատրաստակամության հնարավորությունը: Որ-

<sup>1</sup> Մանրամասն տես **Է. Զոհրաբյան**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997:

<sup>2</sup> Տես League of Nations Archives (այսուհետև՝ LNA), Class.11, dossier 3421, doc. 7359. Document du Conseil, Ar. 3, 20/4/328, La Situation en Armenie:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 3:

պես թուրք-բուլղարական միավորմանը խանգարող քայլ հայկական պատվիրակությունը մատնանշում էր Տրապիզոնի գրավումը դաշնակիցների կողմից, ինչպես նաև առաջարկում էր ճնշում գործադրել Կոնստանդնուպոլսի թուրքական կառավարության վրա, կազմակերպել հունական զորքի առաջխաղացումը և այլն:

Հոկտեմբերի 12-ին հայկական պատվիրակությունից ստացվում է երկրորդ նամակը, որում հայտնում էին, որ թուրքական կողմը հայերին ստիպել է տարհանել Կաղզվանն ու Սարիղամիշը, և կրկին խնդրում էին միջամտել, քանի որ տեղի ունեցող իրադարձությունները սպառնում էին ոչ միայն Հայաստանի, այլև դաշնակից տերությունների շահերին Կովկասում և Փոքր Ասիայում<sup>4</sup>:

Այս նամակները քննարկվում են Լիզայի խորհրդի 1920 թ. հոկտեմբերի 20-ի Բրյուսելի նիստի ժամանակ<sup>5</sup>: «Հայաստանի ապագա կարգավիճակը» գեկույցով հանդես է գալիս Բրիտանիայի ներկայացուցիչ Բալֆուրը, որն անդրադառնում է հայկական պատվիրակության ուղարկած նամակներին: Նա նշում է, որ Լիզան լիազորված չէ քայլեր ձեռնարկելու թուրքական զորքերի՝ Հայաստան ներխուժման հետ կապված, քանի որ դա կատարում են ոչ կանոնավոր զորքերը, որոնք չեն ենթարկվում կառավարությանը: Լիզայի խորհուրդը որոշում է այս հարցով դիմել Գերագույն խորհրդին՝ խնդրելով որևէ քայլ ձեռնարկել Հայաստանին օգնելու, ինչպես նաև սահմանները վերջնականապես որոշելու ուղղությամբ:

Հոկտեմբերի 23-ին հայկական պատվիրակությունից նոր նամակ է ստացվում, որտեղ շարադրված էին ռազմաճակատում գրանցված վերջին դեպքերը<sup>6</sup>: Հայկական կողմը տեղեկացնում էր, որ հոկտեմբերի 13-ին Ռուսաստանի խորհրդային կառավարությունը պաշտոնապես խնդրել էր Հայաստանի Հանրապետությանը իր զորախմբերի համար Հայաստանի տարածքով ազատ անցում ապահովել դեպի Թուրքիա, ինչպես նաև պահանջել էր հրաժարվել Սևրի պայմանագրից, որոնք հայկական կառավարությունը մերժել էր: Սրանով, փաստորեն, հայկական կողմը շեշտում էր իր դիրքորոշումը դեպի Եվրոպա, և ընդգծում էր բուլղարիկների դեմ պայքարելու իր պատրաստակամությունը: Հայկական կողմը խնդրում էր Ազգերի լիգային դիմել դաշնակիցներին՝ առաջարկելով Լեհաստանը որպես միջնորդ ներգրավել բանակցությունում բուլղարիկների վրա ճնշում գործադրելու համար: Հոկտեմբերի 23-ին հայկական կողմին ուղղված իր պատասխան նամակում Լիզայի խորհրդի նախագահ Պոլ Յյունանսը գրում է, որ Սևրի պայմանագրի իրականացումը ոչ թե Լիզայի իրավասությունն է, այլ մեծ տերությունների: Փոխարենը Ազգերի լիգան խոստանում է դիմել տերություններին՝ Հայաստանին օգնություն տրամադրելու համար<sup>7</sup>: Մեկ այլ նամակ էլ Յյունանսը ուղղում է Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի և Ճապոնիայի վարչապետներին՝ խնդրելով վերջնականապես ճշտել Հայաստանի սահմանները<sup>8</sup>:

<sup>4</sup> Տե՛ս LNA, Class. 11, dossier 3421, doc. 7507:

<sup>5</sup> Տե՛ս **Барсегов Ю.** Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарии. Т. 1. М., 2002, էջ 539-540:

<sup>6</sup> Տե՛ս LNA, Class. 11, dossier 3421, doc. 7734:

<sup>7</sup> Տե՛ս **Барсегов Ю.**, նշվ. աշխ., էջ 544-545:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 545:

Իսկ ի՞նչ էին մտածում Հայաստանին օգնելու հարցի մասին Ազգերի լիգայում: Խորհուրդը գտնում էր, որ Հայաստանի դեմ գործողությունները իրականացվում են ոչ թե Կոստանդնուպոլսի օրինական կառավարության, այլ Քեմալի կողմից, որը չի ենթարկվում կառավարությանը: Ինչ վերաբերում էր Սևրի պայմանագրին, ապա Խորհուրդը այն կարծիքին էր, որ թեև Սևրի պայմանագիրը, իրոք, խախտված է, բայց ոչ իրավաբանորեն: Կոստանդնուպոլսի օրինական կառավարությունն ինքը պատերազմում է Քեմալի դեմ: Իսկ Կոստանդնուպոլսի կառավարության վրա յուրաքանչյուր ճնշում միայն ձեռնտու կլինի Քեմալին: Միակ գործուն միջոցը, փաստորեն, մնում էր Քեմալի դեմ ռազմական գործողություններ իրականացնելը, սակայն Ազգերի լիգան չէր կարող և ի վիճակի չէր դիմելու նման քայլի: Ինչ վերաբերում էր տնտեսական պատժամիջոցներին, ապա, ըստ Խորհրդի, դրանք ևս արդյունք չէին տա, քանի որ Քեմալը այսպես թե այնպես ոչ մի երկրի հետ հարաբերություններ չուներ՝ բացի բուլղարիայից և Ռուսաստանից և Կովկասի որոշ երկրներից: Այս ամենից բացի՝ Սևրի պայմանագիրը դեռևս վավերացված չէր, և, ընդհանրապես, Լիգան գտնում էր, որ ճիշտ կլիներ՝ Հայաստանը օգնության հարցով դիմեր դաշնակիցներին, այլ ոչ թե Ազգերի լիգային:

Ինչպես արդեն նշեցինք, հոկտեմբերի 24-ին Ազգերի լիգայի խորհրդի նախագահ Յուլիանսը Հայաստանի ապագա կարգավիճակի վերաբերյալ նամակ էր հղել Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի վարչապետներին, որում մասնավորապես անդրադարձել էր Սևրի պայմանագրի վավերացմանը և Հայաստանին օգնություն տրամադրելու անհրաժեշտությանը: Այս նամակին Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջը պատասխանում է միայն նոյեմբերի 10-ին՝ տեղեկացնելով, որ դաշնակից տերությունները անում են ամեն ինչ ՀՀ ռազմական աջակցություն ցույց տալու առումով՝ վերջինիս տրամադրելով պատերազմական նյութեր և վառելիք: Ինչ վերաբերում է Սևրի պայմանագրին, ապա Մեծ Բրիտանիայի վարչապետը հիշեցնում էր, որ ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը համաձայնել է հանդես գալ որպես արբիտր հայ-թուրքական սահմանի հարցում, և մինչև վերջինիս որոշումը որևէ դրական արդյունք Սևրի պայմանագրի իրագործման ճանապարհին իրատեսական չէ<sup>9</sup>:

Նոյեմբերի 12-ին հայկական պատվիրակությունից ստացվում է հերթական նամակը, որում նշում էր, որ, բացի քեմալական թուրքիայից և բուլղարիկներից, Հայաստանը հարձակման է ենթարկվում նաև խորհրդային Ադրբեջանի կողմից<sup>10</sup>: Եվս մեկ նամակ էլ ստացվում է նոյեմբերի 17-ին, որը տեղեկացնում էր, որ նոյեմբերի 7-ին Հայաստանը ստիպված է եղել շատ ծանր պայմաններով զինադադար կնքել թուրքիայի հետ: Նույն օրը՝ նոյեմբերի 17-ին, Ազգերի լիգայի վեհաժողովի նիստում բավականին ընդարձակ ճառով հանդես է գալիս Հարավաֆրիկյան միության պատվիրակ լորդ Ռոբերտ Սեսիլը<sup>11</sup>: Նա հանգամանորեն ներկայացնում է հայ ժողովրդի կրած տանջանքները, թալեաթի կազմակերպած ջարդերը և կոչ է անում որևէ գործնական քայլ կատարել իրավիճակը շտկելու ուղ-

<sup>9</sup> Տե՛ս **Կ. Իզմիրլեան**, Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալիս և ներկայիս (քննական տեսութիւն), Պեյրուք, 1964, էջ 222:

<sup>10</sup> Տե՛ս LNA, Class. 11, dossier 3421, doc. 8387:

<sup>11</sup> Տե՛ս LNA, Records of the First Assembly Plenary Meetings, էջ 93-96:

ղությամբ: Ռոբերտ Սեսիլը Վեհաժողովի ուշադրությանն է ներկայացնում բանաձևի հետևյալ նախագիծը. «Լիգայի խորհուրդը պետք է անհապաղ քննարկի Հայաստանի կացությունը և Վեհաժողովի քննարկմանը ներկայացնի առաջարկություններ, որոնք նպատակ կունենան վերացնելու հայ ժողովրդի ողջ մնացած հատվածին այժմ սպառնացող վտանգը և այդ երկրում հաստատելու մշտական կարգավորում»<sup>12</sup>:

Նույն օրը Խորհրդի աշխատանքների վերաբերյալ զեկույցով հանդես է գալիս գլխավոր քարտուղարը, որը տեղեկացնում է, որ հայկական պատվիրակությունը դիմել է Խորհրդին՝ խնդրելով օգնություն թուրքական առաջխաղացման վտանգի դեմն առնելու: Սակայն նոյեմբերի 17-ի նիստը սահմանափակվում է այսքանով, իսկ Հայկական խնդրի վերաբերյալ հաջորդ քննարկումը տեղի է ունենում նոյեմբերի 19-ին<sup>13</sup>: Այս անգամ Հայաստանի մասին խոսք է բացում Մեծ Բրիտանիայի պատվիրակ Բարնետը, որը նշում է, որ Ազգերի լիգան և դաշնակիցները արել են ամեն ինչ հայերին օգնելու համար, և եթե որևէ բան չի ստացվել, ապա ոչ թե կամքի, այլ միջոցների բացակայության պատճառով: Ելույթով հանդես է գալիս նաև Շվեյցարիայի ներկայացուցիչ Սոտտան, որը միանում է Սեսիլի՝ նոյեմբերի 17-ի առաջարկին: Պատվիրակը նշում է, որ Շվեյցարիան նույնիսկ առանձին դիմել է դաշնակիցներին՝ խնդրելով ավելի խորությամբ զբաղվել Հայաստանի հարցով, և հայտարարում է, որ ճիշտ կլինի, եթե Լիգան փորձի Հայկական հարցի որևէ լուծում գտնել<sup>14</sup>: Հայկական հարցի քննարկումն այս անգամ ևս տեղի չի ունենում նիստի ավարտի պատճառով:

Մինչև հետագա իրադարձություններին անցնելը նշենք, որ այս քննարկումները հսկայական հասարակական արձագանք են առաջացնում ոչ միայն արտասահմանի հայերի շրջանում, այլև ողջ աշխարհում: Սեսիլի բանաձևը պաշտպանելու խնդրանքով Լիգայի նախագահ Յունամասին նամակներ են ուղարկում Բելգիայի, Ալեքսանդրիայի, Լոնդոնի, Յնդկաստանի, Գերմանիայի, Ռումինիայի, Եգիպտոսի հայ համայնքները, Յնչակյան կուսակցությունը, Դաշնակցության հայկական կոմիտեն, Հայ կանանց միությունը, Լիբերալ կուսակցությունը և այլն<sup>15</sup>: Կոչով դիմում է նաև Գևորգ V կաթողիկոսը<sup>16</sup>:

Նոյեմբերի 20-ին Հայաստանի վերաբերյալ հարցը վերաբացում է Բելգիայի ներկայացուցիչ Լաֆոնտենը, որը մեղադրում է Լիգային և նրա անդամ 41 պետություններին, որոնց «գործերի թիվը հասնում է միլիոնի, և որոնք նավատորմ ունեն Կոստանդնուպոլսում, որտեղից մի քանի քայլ է մինչև այն վայրը, որտեղ անգթորեն կոտորում են դժբախտ հայ ժողովրդին»<sup>17</sup>: Իսկ հայերը, ըստ Լաֆոնտենի, այդքան էլ շատ բան չեն ուզում. լոկ սպաներ՝ ռազմական գործը կարգավորելու համար: Գործը գլուխ չբերելու միակ պատճառը Լաֆոնտենը համարում էր բարի կամքի բացակայությունն ու հայերի դժբախտ ճակատագրի հանդեպ անտարբերու-

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 96:

<sup>13</sup> Տե՛ս LNA, Records of the First Assembly Plenary Meetings, էջ 148-160:

<sup>14</sup> Տե՛ս **Барсегов Ю.**, նշվ. աշխ., էջ 552:

<sup>15</sup> Տե՛ս LNA, Class. 11, dossier 3421, doc. 8502, 9181, 5724, 6562:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, doc. 8847:

<sup>17</sup> **Барсегов Ю.**, նշվ. աշխ., էջ 552:

թյունը: Նույն օրը ելույթ է ունենում նաև Իտալիայի ներկայացուցիչ Տիտոնին, որը Լիգան անվանում է դեռևս նորաստեղծ և թույլ կառույց. «Եթե Լիգան Չերկուլեսի ուժը ունենար և կարողանար սպանել հրեշիս, որ նպատակ ունի պատերազմ սանձազերծելու և խանգարելու համաշխարհային խաղաղությունը, ապա կարող էր իրականացնել իր առաքելությունը»<sup>18</sup>:

Ռոբերտ Սեսիլի առաջարկած բանաձևի քննարկումները Բելգիայի ներկայացուցիչ Լաֆոնտենի կատարած ավելացումով վերջապես սկսվում են նոյեմբերի 22-ին<sup>19</sup>: Լաֆոնտեն Վեհաժողովին առաջարկում է նշանակել 6 հոգուց բաղկացած հանձնաժողով՝ քննարկելու համար հայերի և քենալականների միջև թշնամական գործողությունները դադարեցնելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումները<sup>20</sup>: Բավականին երկար և սրտաճմլիկ ելույթ է ունենում նաև Հարավսլավիայի ներկայացուցիչ Սպալայկովիչը, որը իր ազգի օրինակով ներկայացնում է թուրքական վայրագությունների աստիճանը և առաջարկում անմիջապես հեռագիր ուղղարկել գլխավոր տերությունների պառլամենտներին՝ կոչ անելով հրատապ և արդյունավետ միջոցներ ձեռնարկել հայ ժողովրդի ողջ մնացած մասին փրկելու համար: Սպալայկովիչը գտնում է, որ կոչը ավելի ազդեցիկ կլինի, եթե ընդունված լինի միաձայն և արտահայտի Լիգայի անդամ բոլոր պետությունների ցանկությունը: Սեսիլի բանաձևի ընդունման օգտին է արտահայտվում նաև Շվեդիայի պատվիրակ Բրանտինգը: Իսկ ահա Բրիտանական կայսրության ներկայացուցիչը շարադրում է այն դժվարությունները, որոնք անհնարին են դարձնում Հայաստանին արդյունավետ օգնություն տրամադրելը: Նրա կարծիքով, ամենածանր խնդիրն այն է, որ Լիգայի կանոնադրությունը նման դեպքերի համար ոչինչ չի նախատեսում. այսինքն՝ ցանկությունը դեռ բավարար չէ, անհրաժեշտ են պրակտիկ միջոցներ: Բացի այդ, Բալֆուրի կարծիքով, Հայաստանը չունի հստակ սահմաններ, քանի որ Վիլսոնը դեռ չէր հայտնել իր վճիռը (նշենք, որ Վիլսոնի արբիտրաժային որոշումը լինում է հենց նույն օրը՝ նոյեմբերի 22-ին): Բալֆուրի կարծիքով, միակ ելքը Հայաստանի համար մանդատար պետություն գտնելն էր, որը կկարողանար կազմակերպել Հայաստանին առնչվող բոլոր խնդիրների լուծումը:

Այս կարծիքը բավականին մեծ դժգոհությամբ է ընդունում Ֆրանսիայի պատվիրակ Ռենե Վիվիանին, որը մի նոր բանաձև է առաջարկում. «Ասամբլեան, ձգտելով համագործակցել Խորհրդի հետ ամենակարճ ժամկետներում վերջ տալու հայկական ողբերգությանը, խնդրում է Խորհրդին համաձայնության գալ կառավարությունների հետ այն նպատակով, որ վերջիններս համոզեն իրենց պետություններին քայլեր ձեռնարկելու Հայաստանի և քենալականների միջև ռազմական գործողությունները դադարեցնելու համար»<sup>21</sup>:

Նոյեմբերի 22-ի նիստին ելույթ է ունենում նաև Նորվեգիայի ներկայացուցիչ Ֆ. Նանսենը, որը կոնկրետ առաջարկ է անում. ըստ նրա՝ 60.000-անոց արչավախումբը, որի համար անհրաժեշտ կլինի մոտ 20 մլն ֆունտ,

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 554-555:

<sup>19</sup> Տե՛ս LNA, The Ninth Plenary Meeting of the Assembly, էջ 184-202:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 184:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 204:

բավական կլինի հայերին օգնելու համար: ԱՄՆ-ը թեև հրաժարվել էր մանդատից, սակայն չէր հրաժարվել օգնել հայերին ոչնչացումից: «Իհարկե Լիգան վտանգում է իր հեղինակությունը՝ սկսելով մի գործ, որը չի կարող ավարտին հասցնել, սակայն Լիգան իրեն ավելի է վտանգում, եթե ոչինչ չձեռնարկի»<sup>22</sup>:

Չարկ չենք համարում այստեղ անդրադառնալու բոլոր ելույթներին: Դրանք բոլորն էլ աչքի էին ընկնում սրտառուչ բովանդակությամբ, հայերին օգնելու բուռն ցանկությամբ: Սակայն, ինչպես ասում են, այստեղ խոսքն ու գործը չէին համընկնում: Բավականին դիպուկ է արտահայտվում Կանադայի ներկայացուցիչ Դոգերտին, որը հայ-թուրքական պատերազմը համարում է Լիգայի իրավասությունը, քանի որ այն համապատասխանում էր Լիգայի կանոնադրության XI հոդվածին, այսինքն՝ պատերազմական վիճակ, որը սպառնում է միջազգային խաղաղությանը, և որին Լիգայի խորհուրդը պետք է միջամտի<sup>23</sup>:

Երկար քննարկումներից հետո ի վերջո որոշվում է երկու բանաձևն էլ դնել քվեարկության, որոնք ընդունվում են միաձայն: Վեհաժողովի նախագահը առաջարկում է համապատասխան խմբերի և անձանց հետ խորհրդակցելուց հետո նշանակել կոմիտե 6 անդամներով: Այս որոշումը իրականացնելու նպատակով նույն օրը գումարվում է Ընդհանուր հարցերով հանձնաժողովի նիստը, որի կազմի մեջ էին նախագահը և 12 փոխնախագահները: Հայկական հարցով զբաղվող Կոմիտեի անդամներ են նշանակվում լորդ Ռ. Սեսիլը (Հարավային Աֆրիկա), պրն Լաֆոնտենը (Բելգիա), պրոֆ. Նանսենը (Նորվեգիա), պրն Պուերրեդոն (Արգենտինա), պրն Շանցերը (Իտալիա), պրն Ռ. Վիվիանին (Ֆրանսիա)<sup>24</sup>:

Վեհաժողովի նախագահ Յուլյանսը միջնորդության հարցը գլուխ բերելու համար հրավիրում է նաև Լիգայի խորհրդի նիստ: Նոյեմբերի 24-ին ժնկում գումարվում է Լիգայի խորհրդի 11-րդ նիստը, որի նպատակն էր համապատասխան քայլեր ձեռնարկել Վեհաժողովի նոյեմբերի 22-ի բանաձևը իրականացնելու համար<sup>25</sup>: Մտքերի փոխանակումից հետո խորհուրդը որոշում է դիմել Լիգայի անդամ բոլոր կառավարություններին, ինչպես նաև հաղորդագրություն ուղարկել ԱՄՆ նախագահին: Այս վերջին քայլը պայմանավորված էր նրանով, որ Հայաստանի սահմանները որոշելու Վիլսոնի համաձայնությունը վերջինիս վրա նաև որոշակի բարոյական պարտավորություն էր դրել Հայաստանի վերաբերյալ հարցերում: Գլխավոր քարտուղարի կազմած հեռագրերը նոյեմբերի 25-ին ուղարկվում են ԱՄՆ նախագահին և մյուս երկրների կառավարություններին: Հեռագրերում նշված էր Վեհաժողովի նոյեմբերի 22-ի բանաձևը, ապա խորհրդի խնդրանքը՝ արձագանքել և միայնակ կամ այլ պետությունների հետ համատեղ հանդես գալ որպես միջնորդ Հայաստանի և քեմալականների միջև ռազմական գործողությունները դադարեցնելու համար<sup>26</sup>: Ինչպես և ենթադրվում էր, կառավարությունները բավականին արագ են արձագանքում խորհրդի հեռագրերին: Նոյեմբերի 30-ին ստաց-

<sup>22</sup> LN, The Ninth Plenary Meeting of the Assembly, p. 193.

<sup>23</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 412, ց.1, գ. 2286, Covenant of the League of Nations:

<sup>24</sup> Տե՛ս **Барцегов Ю.**, նշվ. աշխ., էջ 576:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 577:

<sup>26</sup> Տե՛ս LNA, Class. 11, dossier 3421, doc. 10064:

վում է Իսպանիայի արտաքին գործերի նախարար Ս. Դատոյի պատասխանը, որը հայտնում էր իր կառավարության պատրաստակամությունը՝ համագործակցելու բարոյական և դիվանագիտական քայլերով՝ ուղղված Ազգերի լիգայի խաղաղասիրական առաքելությունների իրագործմանը: Չնայած իսպանական կառավարությունը նշում էր, որ չի պատկերացնում, թե ինչպես է իրականանալու օգնությունը, սակայն իր պատրաստակամությունն է հայտնում աջակցելու Հայաստանի և քեմալականների միջև ռազմական գործողությունների դադարեցմանը<sup>27</sup>:

Դրական պատասխան է ստացվում նաև Բրազիլիայից: Նոյեմբերի 30-ին Բրազիլիայի արտաքին գործերի նախարար Ազևեդո Մարկեսը իր պատասխան նամակում գրում է, որ Բրազիլիայի կառավարությունը պատրաստ է միայնակ կամ այլ պետությունների հետ համատեղ աջակցել՝ վերջ դնելու Հայաստանում տիրող դաժան իրավիճակին<sup>28</sup>: Դեկտեմբերի 1-ին պատասխանում է նաև ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը, որը թեև շեշտում էր, որ իրավասու չէ երկրի ռազմական ուժը և ֆինանսները առանց Կոնգրեսի համաձայնության տնօրինելու, որը այդ պահին նիստ չունի, սակայն պատրաստ է օգտագործելու իր պաշտոնը և անձնական միջնորդությունը իր կողմից նշանակված անձի միջոցով՝ վերջ դնելու համար հայ ժողովրդի դեմ իրականացվող թշնամական ռազմական գործողություններին և խաղաղություն հաստատելու տարածաշրջանում<sup>29</sup>:

Թեև Լիգայի հետագա փաստաթղթերում նշվում է, որ Վեհաժողովի կոչին դրական են արձագանքում միայն Իսպանիան, Բրազիլիան և ԱՄՆ-ը, սակայն արխիվների ուսումնասիրությունը փոքր-ինչ փոխում է ընդհանուր պատկերը: Հավանաբար դրանք ստացվել են նամակների պաշտոնական հրապարակումից ավելի ուշ և այդ պատճառով էլ չեն ընդգրկվել մյուսների ցուցակում: Մասնավորապես մեջբերենք Պերուի, Պանամայի և Գվատեմալայի կառավարությունների պատասխանները, որոնք նույնպես դրական էին:

«Նոյեմբերի 30, Պերուի կառավարությունը կանի ամեն հնարավորը այլ պետությունների հետ միասին նոյեմբերի 22-ի բանաձևը իրագործելու և Հայաստանում տիրող իրավիճակին վերջ դնելու համար»<sup>30</sup>:

«Դեկտեմբերի 4, Պանամայի Հանրապետությունը, հավանություն տալով նոյեմբերի 22-ի բանաձևին, համաձայն է համագործակցել նպատակին հասնելու համար և պատրաստ է տրամադրելու որևէ առաքելություն, որը Ազգերի լիգան կուղարկի, պայմանով, որ Լիգայի մյուս անդամները ևս մասնակցեն՝ իրենց բնակչության թվին համապատասխան»<sup>31</sup>:

«Գվատեմալայի կառավարությունը համոզված է, որ պետք է որևէ քայլ ձեռնարկել, և տալիս է իր համաձայնությունը Խորհրդի յուրաքանչյուր որոշմանը»<sup>32</sup>:

Որքան էլ տարօրինակ է, սակայն Հայաստանին օգնելու պատրաստակամություն են հայտնում Հայաստանից հեռու գտնվող փոքր երկրներ

<sup>27</sup> Տե՛ս LNA, Records of the Assembly. Document de L'Assemblée 155, 20/48/155:

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>30</sup> LNA, Class.11, dossier 3421, doc. 9078.

<sup>31</sup> Նույն տեղում:

<sup>32</sup> Նույն տեղում, doc. 10048.

րը, որոնք նույնիսկ մեծագույն ցանկության դեպքում չէին կարող միայնակ օգնել հայերին: Մինչդեռ մեծ տերությունները մեկը մյուսի հետևից մերժողական պատասխաններ են ուղարկում Լիզա:

Վերոհիշյալ գրագրության արդյունքները հրապարակվում են Վեհաժողովի դեկտեմբերի 2-ի նիստում: Նկատենք, որ «Հայաստանը փրկելու» Ազգերի լիգայի այս «ջանքերը» շարունակվում էին այն ժամանակ ևս, երբ Հայաստանում հաստատվել էին խորհրդային կարգեր, իսկ Թուրքիայի հետ դեկտեմբերի 2-ին կնքվել էր Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Նշենք, որ նույն օրը կնքվել էր նաև մեկ այլ համաձայնագիր (Լեզրան-Դրո), որով Հայաստանում հաստատվել էին խորհրդային կարգեր: Մի պահ կարող է թվալ, թե Լիզայում գուցե տեղյակ չեն եղել Հայաստանում կատարված իրադարձությունների մասին: Սակայն Թիֆլիսում ամերիկյան հյուպատոսը պետքարտուղարին ուղղած հեռագրում հաղորդել էր այդ մասին: Տեղյակ լինելու փաստի մասին է վկայում նաև Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահ Լևոն Մեղրոջյանի նամակը Լիզայի խորհրդի նախագահ Հյունանսին: Նրանում ի մասնավորի ասված էր. «Թվում է, որ Երևանի հանրապետության տարածքում վերջերս տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները որոշ շփոթմունք են առաջացրել, և քաղաքական շրջանակներում սկսել են հնչեցնել, թե ինչպես օգնենք Հայաստանին, եթե այնտեղ խորհրդային կարգեր են հաստատվել»<sup>33</sup>: Այսինքն՝ անտեղյակության մասին խոսք լինել չէր կարող: Պատասխանը պետք է փնտրել այլ տեղում: Հավանաբար պատճառն այն էր, որ տերությունները և Ազգերի լիգան Հայաստանում կատարված փոփոխությունները համարում էին ժամանակավոր:

Ավարտելով Հայաստանին օգնություն ցույց տալու հարցի շուրջ ծավալված քննարկումները՝ Ազգերի լիգայի վեհաժողովը 1920 թ. դեկտեմբերի 16-ին Հայկական խնդրի կապակցությամբ ընդունում է հետևյալ բանաձևը. «Ասամբլեան լիահույս է, որ ԱՄՆ-ի նախագահի ջանքերը, որոնք եռանդուն կապշտպանվեն Իսպանիայի և Բրազիլիայի կառավարությունների, ինչպես նաև Լիզայի խորհրդի կողմից, կհանգեցնեն հայ ժողովրդի փրկությանը և Հայաստանի համար կապահովեն կայուն կառավարություն, որն իր իշխանությունը կիրականացնի պետության ողջ տարածքում, որի սահմանները վերջնականապես կհաստատվեն Սևրի պայմանագրով, և Վեհաժողովը հնարավորություն կստանա իր հաջորդ նստաշրջանում ընդունել Հայաստանին որպես լիիրավ անդամ»<sup>34</sup>:

Հայաստանի վերաբերյալ Վեհաժողովի հերթական քննարկումը տեղի ունեցավ հաջորդ օրը՝ դեկտեմբերի 17-ին, որտեղ բավականին արտառոց և անիրականամալի առաջարկ արեց Ռումինիայի ներկայացուցիչ պրն Իոնեսկուն. «Հայ ժողովրդին արագ և ռեալ օգնություն ցույց տալու համար, որը իսկապես գտնվում է կործանման եզրին, Ռումինիան առաջարկում է ժնևում հավաքված երկրներին ստեղծել միջազգային արշավախմբեր, որոնք կարգուկանոն և խաղաղություն կհաստատեն Հայաստանում: Այդ միջազգային ուժերը պետք է գտնվեն դաշնակիցների գլխավոր շտաբի ղեկավարության ներքո և կարող էին ընդգրկել

<sup>33</sup> Նույն տեղում, doc. 10050:

<sup>34</sup> Ա. Եսայան, Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Եր., 1967, էջ 209-210:



40.000 մարդ, որոնք պետք է հավաքագրվեին Լիգայի անդամ պետություններից՝ համապատասխան բնակչության թվի: Ռումինիան պատրաստ է օգնել մարդկային ռեսուրսներով, նյութերով և փողով»<sup>35</sup>: Մեղմ ասած, ռումինական կառավարության առաջարկը ժամանակավրեպ էր, քանի որ պատերազմը, փաստորեն, ավարտված էր, պայմանագիրը քեմալականների հետ՝ կնքված: Ո՞ւմ դեմ պետք է կռվեին միջազգային այդ ուժերը. պատասխանը մնում է մեկը՝ բոլշևիկների: Այս դեպքում Ռումինիայի պահվածքը միանգամայն հասկանալի է. որպես հարևան ունենալով խորհրդային Ուկրաինան՝ Ռումինիան խիստ անհանգստացած էր սեփական ճակատագրի համար, և այստեղ էլ, հավանաբար, թաքնված է բացատրության բանալին:

Իսկ ինչպիսի՞ն էր Վեհաժողովի արձագանքը նման անակնկալ առաջարկին: Այս կապակցությամբ հանդես է գալիս Յուլյանա, որը անհնարին է համարում Վեհաժողովի կողմից վերոհիշյալ առաջարկի քննարկումը, քանի որ մի քանի օրից այն ավարտելու էր իր աշխատանքները: Ռ. Սեսիլի առաջարկով որոշվում է այն հանձնել Հայկական հարցով նշանակված հատուկ Կոմիտեին, որը իր զեկույցը պետք է ներկայացներ հաջորդ օրը՝ դեկտեմբերի 18-ին: Որոշվում է նաև պրն Իոնեսկուին ևս ընդգրկել Կոմիտեի կազմի մեջ<sup>36</sup>:

Ինչպես և նախատեսված էր, դեկտեմբերի 18-ին Վեհաժողովը լսեց Հայաստանի հարցերով Կոմիտեի զեկույցը: Ցավոք, մեզ չհաջողվեց գտնել այլ տեղեկություններ, ուստի ստիպված ենք ներկայացնել միայն արդյունքը, այսինքն՝ զեկույցը: Ինչ վերաբերում է Կոմիտեի զեկույցին, ապա դրանից պարզ է դառնում, որ Կոմիտեն հանդիպել էր 6 անգամ՝ քննարկելու Հայաստանում տիրող իրավիճակը և գտնելու հայերին օգնելու ելքեր: Չեկույցը նախ անդրադառնում էր ռազմաճակատում տիրող իրավիճակին՝ նշելով, որ հայերին չի հաջողվել ետ շարտել թուրքական զորքերին: Եվ որպես պատճառ մատնանշվում էր ոչ թե հայկական զորքի քիչ լինելը, այլ կազմակերպվածության լիակատար բացակայությունը (թե՛ քաղաքական և թե՛ ռազմական առումով): Կոմիտեն համոզված չէր, որ թուրքական ուժերը գերակշռում են: Ելնելով այս հանգամանքից՝ Կոմիտեն որոշել էր, որ հայերին օգնելու համար բոլորովին էլ անհրաժեշտ չէ ռազմական արշավախումբ ուղարկել, այլ պարզապես պետք է հայերին տրամադրել ինքնաշտպանության միջոցներ: Կոմիտեն համոզմունք էր հայտնել, թե լավ կազմակերպելու ունակ մարդ գտնելու դեպքում կարելի էր համենատաքար քիչ գումարով հասնել լավ արդյունքի: Կոմիտեն առաջարկում էր ստեղծել հատուկ ֆոնդ, որի միջոցների ղեկավարումը պետք է իրականացվեր այնպիսի մի անձնավորության կողմից, որը կվայելեր դոնորների վստահությունը: Քանի որ Վեհաժողովը շուտով ավարտելու էր իր առաջին նստաշրջանը, Կոմիտեն առաջարկում էր ստեղծել որևէ մարմին, որը տեղյակ կլինի հայկական գործերից, ինչպես նաև իրավասու՝ միջամտելու այդ ուղղությամբ իրականացվող քայլերին: Արդյունքում Կոմիտեն խնդրում էր, որ Վեհաժողովը դիմի խորհրդին՝ հայկական գործերով հատուկ կոմիտե նշանակելու համար, որը կզբաղ-

<sup>35</sup> LNA, Records of the First Assembly, Twenty-ninth Plenary Meeting of the Assembly, pp. 672-673.

<sup>36</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 673-674:

վի Չայկական խնդրով և իրավասու կլինի որոշելու իր անդամների հանդիպումների հաճախականությունը: Ընդ որում, առանց Լիգայի անդամ պետությանների համաձայնության վերջինիս վրա որևէ պարտավորություն չէր կարող դրվել<sup>37</sup>:

Ձեկույցը ներկայացնող Բելգիայի ներկայացուցիչ Լաֆոնտենն անդրադառնում է նաև ԱՄՆ-ի Սենատի կողմից Չայաստանին 25 մլն դոլարի վարկ բացելու հարցին, ինչպես նաև շնորհակալություն է հայտնում ռումինական կառավարությանը՝ իր առաջարկի համար և հայտարարում, որ խաղաղ միջոցների սպառման դեպքում Լիգան կդիմի նրանց առաջարկած օգնությանը: Ուրեմն ի՞նչ է ստացվում. դեկտեմբերի 18-ին Լիգան դեռ խոսում էր խաղաղ միջամտության հնարավորության մասին, որին կարող էր փոխարինել ռազմական օգնությունը (խոսքը շաբաթների, գուցե և ամիսների մասին է), մինչդեռ դեկտեմբերի 2-ին արդեն ամեն ինչ ավարտվել էր. հայերի և թուրքերի միջև կնքվել էր Ալեքսանդրապոլի պայմանագիրը, և հայերին թուրքերից փրկելու անհրաժեշտություն այլևս չկար:

Ահա այսպիսին էր հայկական գործերով Կոմիտեի զեկույցը. ոչինչ չասող, չհուսադրող, ոչինչ չենթադրող: Նույնիսկ զեկույցում նշված տեղեկություններն արժանահավատ չէին (խոսքը հայկական գործերի թվաքանակի մասին է):

Սակայն հայկական գործերով մշտական կոմիտե ստեղծելու զեկույցի առաջարկը չի ստանում Վեհաժողովի աջակցությունը, քանի որ մշտական կոմիտեի ստեղծումը նախ նախադեպ կլիներ և, երկրորդ, կհարվածեր Լիգայի խորհրդի հեղինակությանը, որն ինքը, ըստ էության, կարող էր հանդես գալ որպես նման մարմին: Նույն օրը Ֆրանսիայի պատվիրակ Վիվիանին անում է հետևյալ առաջարկությունը. «Վեհաժողովը, հիշեցնելով 1920 թ. նոյեմբերի 22-ի իր որոշումը, կշարունակի համագործակցել խորհրդի հետ, որին վստահված է ապահովել Չայաստանի ապագան՝ անհրաժեշտության դեպքում դիմելով Լիգայի անդամների խորհրդին: Վեհաժողովն ընդգծում է, որ Լիգայի նախաձեռնությանը ի պատասխան արդեն համընդհանուր համակրանք կա Չայաստանի հանդեպ, և որ Չայաստանին միջնորդություն են առաջարկել պրեզիդենտ Վիլսոնը, Իսպանիան և Բրազիլիան»<sup>38</sup>:

Նիստի ժամանակ կրկին անդրադարձ է լինում Ռումինիայի ներկայացուցչի առաջարկին, որի դեմ բավականին երկար ելույթ է ունենում Էմիր Ջոկա-եդ-Դովլեխը (Պարսկաստան), որը հայտարարում է, թե առավել արդյունավետ կլիներ ուղղակի կապի մեջ մտնել Չայաստան ներխուժած քենալականների և սովետական զորքի հետ՝ խաղաղ ճանապարհով հարցը լուծելու համար: Վեհաժողովը քվեարկում է պրն Վիվիանիի առաջարկի օգտին, այսինքն՝ Չայկական հարցի ճակատագիրը կրկին վերադառնում էր խորհուրդ: Ինչ վերաբերում էր միջնորդությանը, ապա ԱՄՆ-ն, Իսպանիան և Բրազիլիան պետք է իրականացնեին իրենց միջնորդական առաքելությունը՝ ի պատասխան Վեհաժողովի նախաձեռնության<sup>39</sup>:

<sup>37</sup> Տե՛ս, LNA, Class. 11, dossier 3421, doc. 10065:

<sup>38</sup> «Վեմ», հանդես մշակոյթի և պատմութեան, 2, Յուլիս-օգոստոս, Բ տարի, թիւ 4, Փարիզ, 1934, էջ 5:

<sup>39</sup> Տե՛ս LNA, Records of the First Assembly Plenary Meetings, pp. 730-731:

Նույն օրը՝ դեկտեմբերի 18-ի երեկոյան, տեղի է ունենում Վեհաժողովի առաջին նստաշրջանի փակման արարողությունը: Իր ելույթում նախագահ Յուլմանսը վերջին անգամ անդրադառնում է Հայկական հարցին. «Երկար ժամանակահատված մեծ տերությունները զբաղված էին Հայկական հարցով, սակայն ի վիճակի չեղան լուծելու այն: Քաղաքագետները, վերջին հաշվով, միշտ չէ, որ ղեկավարվում են զգացմունքներով, անհրաժեշտ է հաշվի առնել ուղիները և միջոցները: Մենք չգտանք մանդատար պետություն, սակայն գոնե կարողացանք միջնորդ գտնել: Մեր բախտը բերել է, որ Վ. Վիլսոնը համաձայնեց ստանձնել միջնորդի դերը, որին այդ հարցում կաջակցեն Իսպանիան և Բրազիլիան: Հայաստանը մեծապես զբաղեցնում է մեր մտքերը, և մենք անկեղծորեն ուզում ենք օգնել նրան: Մեր պարտքն է աշխատել հանուն այդ նպատակի: Խորհուրդը կգործի համառորեն՝ օգտագործելով մեր ունեցած ողջ ներուժը և միջոցները: Մենք առանց բացառության միահամուռ ենք այդ տառապյալ ժողովրդին թշնամիներից փրկելու հարցում, որին երկար տարիներ մերժում էին գթասրտություն ցուցաբերելու հարցում»<sup>40</sup>:

Այսպիսի «մարդասիրական ոգով» էլ Վեհաժողովը փակում է Հայկական հարցի էջը իր առաջին նստաշրջանում: Ինչպես հանդիմանք, խոսքով Լիգան բոլորովին չէր թերանում: Հայաստանի օգտին հնչեցրած բոլոր ելույթները լի էին գթասրտության և աջակցության կոչերով, սակայն ինչպես փակման խոսքում ճիշտ նկատել էր Յուլմանսը, քաղաքագետները միշտ չէ, որ ղեկավարվում են զգացմունքներով: Իսկ ավելի ճիշտ կլիներ ասել, որ երբեք էլ չեն ղեկավարվում զգացմունքներով:

**ЭДИТА ГЗОЯН – Турецко-армянская война 1920 г. и Лига Наций.** – 23 сентября 1920 года превосходящие силы турецкой армии начали наступление на Армению. Последняя обратилась к великим державам и Лиге Наций с просьбой остановить военные действия и не дать уничтожить армянский народ.

Армянская национальная делегация в Париже неоднократно просила Лигу Наций вмешаться. Отметим, что как раз в это время Лига обсуждала приём Армении в свой состав. Вопрос о прекращении бойни ставился на сессиях первой ассамблеи Лиги Наций. Произносились пламенные речи, призывающие спасти армянский народ; отдельные ораторы даже предлагали прибегнуть к военному вмешательству. Но великие державы возражали против приёма страны в Лигу Наций и предоставления ей какой-либо помощи. Их отношение обуславливалось тем, что 2 декабря в Армении произошла советизация. Планы использовать её в борьбе с большевизмом провалились, и державы потеряли к Еревану всякий интерес.

Хотя Лига Наций не раз обсуждала вопрос армяно-турецкой войны, эта международная организация так и не предприняла реальных шагов к его решению.

**EDITA GZOYAN – The 1920 Turkish-Armenian War and the League of Nations.** – On September 23, 1920, the Turkish army, which dominated over the newly-formed Armenian army in both quantity and military training, started its attack. The Republic of Armenia requested the intervention of the Great Powers and the League of Nations to stop the hostilities and save the Armenian people.

<sup>40</sup> LNA, Records of the First Assembly Plenary Meetings, pp. 758-761.

The Armenian National Delegation in Paris applied several times to the League of Nations, requesting their assistance. The issue was considered during the sessions of the Council and the First Assembly of the League of Nations. Many warm speeches were addressed to Armenia and the Armenian people; several League members even offered a military intervention. Nevertheless, the Principal Great Allies were against admitting Armenia to the League of Nations, and providing either military assistance or other forms of intervention. This attitude was provoked by the fact that Armenia had previously signed an agreement with Soviet Russia and soviet power had been established in the country. Hence, the plans of the Great Powers to use Armenia in their struggle against bolshevism were upset and they left their "little ally" alone against Turkish troops and the Bolsheviks.

Although the League of Nations addressed the issue of Turkish-Armenian war on a number of occasions, it did not make any actual steps to resolve it.